«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301, 303,
հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37, +(374 55) 06-69-92
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

Դիմում

Հարգելի պարոն վարչապետ

Ինչպես արդեն տեղյակ եք, ՀՀ կառավարության՝ Գյումրիից Մինասի որմնանկարների տեղափոխման նախաձեռնությունը բուռն բողոքի ալիք է բարձրացրել: Ավելին, գյումրեցի մշակույթի գործիչների, քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների և անհատ քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվել է Գյումրիից տարված չորս որմնանկարների վերադարձման պահանջով ստորագրահավաք: Այս գրությանը կից ուղարկում ենք ևս 2106 քաքացիների ստորագրություններով պահանջագիրը:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի,
18 հուլիսի 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N01/9/5273-11 «29» 07 2011 թ.

Գյումրու <<Շիրակ կենտրոն>>
ՀԿ նախագահ
պրն Վ. ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թումասյան

Ի պատասխան Ձեր՝ ՀՀ Կառավարությանն ուղղված և 25. 07. 2011 թ. թիվ 02/14.8/12483-11 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանը վերահասցեագրված դիմումի, որով պահանջվում է, ըստ Ձեզ, գյումրեցիների սեփականություն հանդիսացող <<Հանդիպում>>, <<Խաչքարի մոտ>>, <<Երկանք>> և <<Թել են մանում>> որմնանկարները վերադարձնել Գյումրի՝ հայտնում ենք, որ համաձայն <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> ՀՀ օրենքի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր հուշարձանները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով չեն համարվում իրավաբանական կամ ֆիզիկական անձանց սեփականությունը, Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

Ընդ որում, ՀՀ Կառավարության <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին>> 09.09.2004 թ. N 1270-Ն որոշմամբ հաստատված ցուցակում

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
էլ. փոստ/ Эл. почта/ E-mail: info@mincult.am, www.mincult.am

ընդգրկված որմնանկարների օտարման գործընթաց ՀՀ մշակույթի նախարարության կողմից մինչ օրս չի իրականացվել:

Միաժամանակ, մտահոգվելով Շիրակի մարզում գտնվող որմնանկարների պահպանության խնդրով և հաշվի առնելով, որ.

1) որմնանկարները հայտնվել էին փլուզված կամ խիստ վթարային, ազգաբնակչության, զբոսաշրջիկների, մասնագետների այցելությունների համար դժվարամատչելի (փակ) տարածքներում,

2) նշված տարածքներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունները որևէ պարտավորություն չէին ստանձնել դրանց պահպանությունն, առավել ևս վերականգնումն իրականացնելու համար,

3) 1990-ական թվականներից մինչ նախարարության կողմից /2007 թվական/ որմնանկարների ուսումնասիրության ամբողջական ծրագրի իրականացման նախաձեռնումը որևէ կառույցի, անհատի կամ հասարակական կազմակերպության կողմից առաջարկություններ չէին ստացվել լքված, կիսաքանդ շենքերի բարեկարգման, որմնանկարների նպատակային օգտագործման և մատչելիության ապահովման վերաբերյալ,

2010 թվականին լիազոր մարմնի՝ ՀՀ մշակույթի նախարարության, նախաձեռնությամբ (Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի N 734-Ա որոշում) Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ-ի նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Հանդիպում (15 թվական)>> և <<Խաչքարի մոտ>> որմնանկարները տեղափոխվել և վերականգնվել են Հայաստանի Հանրապետության Կառավարության N 1 շենքում: Ներկայում իրականացվում են (Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 500-Ա որոշում) Էլեկտրատեխնիկական գործարանի նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Երկանք>> և Գալվանոմետր (<<Օմեգա>>) գործարանի մասնաշենքում գտնվող <<Թել են մանում>> որմնանկարների ամրակայման, տեղափոխման և <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի նախագահական համալիրում ու նոր ուղևորային համալիրի մեկնման սրահում վերականգնման աշխատանքները:

ՀՀ Կառավարության վերոնշյալ 2 որոշումների նախագծերը <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով ուղարկվել են բոլոր շահագրգիռ

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
էլ. փոստ/ Эл. почта/ E-mail: info@mincult.am, www.mincult.am

մարմիններին, այդ թվում նաև՝ ՀՀ Շիրակի մարզպետարան՝ կարծիքի (գործընթացի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը առկա են նախարարությունում):

Հավելենք նաև, որ բոլոր որմնանկարները, որպես մշակութային արժեք, շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության սեփականությունը: <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ <<հուշարձան օգտագործող իրավաբանական և ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում դրանց պահպանության ու անվթարության ապահովման համար և պարտավոր են կատարել հուշարձանների պահպանության ու օգտագործման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները>>:

Մշակութային ժառանգությունը մեր ժողովրդի ընդհանուր հարստությունն է, և ՀՀ մշակույթի նախարարությունը հայտնում է իր պատրաստակամությունը՝ աջակցելու բոլոր գործուն առաջարկներին:

Հարգանքով՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Գ. Դուրգարյան
Հեռ.՝ 56-45-46

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
էլ. փոստ/ Эл. почта/ E-mail: info@mincult.am, www.mincult.am